

Ա. ՄԵԼԻՔ-ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՍԳՈ ՕՐԵՐԸ

**Մեծ ուսուցիչ և առաջնորդ հոսկի Վիստա-
րինովիշ Ստալինի մահվան բոթը կայծակի
արագությամբ տարածվեց Սովետական Հա-
յաստանի քաղաքներում ու գյուղերում, ա-
նասելի վիշտ պատճառելով ամենքին:**

Դժվար է բառեր գտնել նկարագրելու այն,
ինչ զգաց ու ապրեց հայ ժողովուրդը Սովե-
տական ողջ երկրին պատաժ ծանր վշտի օրե-
րին:

...Անցյալում մեր ժողովուրդը շատ է վիշտ
կրել Սակայն նրա սովետական շրջանի
պատմությունը բնորոշ է նրանով, որ մեր
ժողովուրդը մտնելով երջանիկ կյանքի ձա-
նապարհը, իսպառ մոռացավ իր դարավոր
վշտերը:

Ստալին...

Որքան թանկ է ու հարազատ այս անունը
ամեն մի ազնիվ, իր Հայրենիքին ու ժողո-
վրդին նվիրված հայի սրտին:

Մարդկային պատմության մեջ հայտնի
բրոր այն անձինք, որոնք որևէ առիթով ա-
ռանջություն են ունեցել մեր երկրի հետ,
եղել են թշնամիներ, ասպատակողներ, եղել
են հարստահարողներ:

Նույնիսկ եվրոպական դիվանագիտության
հին գալլերը, որոնց տնօրինմանն էր հանձ-
նելած «Հայկական հարցը», մեր ժողովրդի
ամենանենք թշնամիները հանդիսացան նրա-
նով, որ իրենց կեղուոտ նպատակների հա-
մար խարեցին ու շարաշահեցին նրա նվի-
րական բաղանքները, նրա վստահությունը
և դրանով իսկ բնաշնչման սոսկալի աղետի
մատնեցին այդ ժողովուրդին:

Եվ միայն երկու հոգի, մարդկության նո-
րագույն պատմության երկու ամենապայծառ
անձինք, այն պահին, երբ մեր տառապյալ
ժողովուրդը գտնվում էր կործանման անդուն-
դի եզրին, բարեկամական ձեռք մեկնեցին
նրան և ի լուր ամրող աշխարհի հայուրա-
րեցին.

«Ինչ գնով էլ լինի՝ պե՞տք է փրկել Հայա-
տանը...»:

Այդ անձինք Վ. Ի. Լենինը և Ի. Վ.
Ստալինն էին, մեր ժողովրդի ամենամեծ բա-
րեկամները, նրա պատարարները,

Ստալին...

Այդ անունը հավետ կհիշվի մեր ժողովրդի
պատմության մեջ այն էշերից ի վեր,
որոնցով սկսվում է նրա ազատ, անկախ ու
երշանիկ կյանքի պատմությունը:

Այդ անունը խորին երախտագիտությամբ
կարտասանի ամեն մի հայ, քանի հինավորց
Սրբարատի ստորոտներին կապրի մեր ժողո-
վուրդը:

Այդ անունը շուրջերին, մեր ժողովուրդը
աննախընթաց շափերով շենացրեց իր Մայր
Երկրը, հասավ իր տնտեսության և կու-
տուրայի շտեսնված ծաղկման ու բարգա-
վաճման:

Այդ անունը սրտում, հայ ժողովուրդը, սո-
վետական մյուս ժողովուրդների եղբայրա-
կան ընտանիքում, վստահ ու համարձակ
կընթանա դեպի ավելի լուսաշող բարձունք-
ներ:

Մարտի 6-ին, 7-ին, 8-ին և 9-ին ոեսպուր-
իկայի բոլոր գյուղերում, գործարաններում,
հիմնարկներում, ուսումնական հաստատու-
թյուններում տեղի ունեցան աշխատավորնե-
րի սգո ժողովներ: Հանգիս գալով այդ ժողով-
ներում, ամենատարբեր խավերի ներկայա-
ցուցիչներն արտահայտում էին իրենց ան-
սահման կակիծը ծանր, անփոխարինելի
կորստի առթիվ և հույս հայտնում, որ Սո-
վետական կառավարությունը, մեծ Ստալինի
զինակիցներն ու աշակերտները, անսամբ-
լ վստահ առաջ կտանեն երկրի դեկավար-
ման գործը և հաջողությամբ կիրագործեն
նրա բոլոր պատգամները:

Ժողովներում ընդունված բանաձեռնությունը
աշխատավորները հայտնում էին իրենց ան-
սահման սերն ու նվիրվածությունը դեպի

Հարազատ կառավարությունը և հավաստիացնում, որ իրենք պատրաստ են ամեն շանք գործ դնել հայրենի երկրի հետագա զարգացման ու առաջադիմության համար:

Խորը սուր էր պատել այդ օրերին հայոց աշխարհին: Դադարել էր ամեն երդ ու խընդություն, որն այնքան հատուկ է սովետական կենսուրախ ժողովրդին: Մարդիկ դարձել էին մտագրադ և ավելի կենտրոնացած: Թուրքի դեմքերին դրոշմված էր ծանր թախի-

նակներով: Կառավարական տան աշտարակի վրա խոնարհված էր Սովետական Հայաստանի պետական դրոշը:

Առանձապես ծանր էր ու ցնցող մարտի 9-ը՝ ի. Վ. Ստալինի թաղման օրը:

Այդ օրը կեսօրվա պահին, երբ Մոսկվայում տեղի էր ունենում ի. Վ. Ստալինի թաղման արարողությունը, Հայաստանի քաղաքներում ու գյուղերում մարդկանց հոծ բազմություններ հավաքվել էին ուղիորդարձրա-



Երևանի աշխատավորությունը մարտի 9-ին, ի. Վ. Ստալինի մոհումնենտ-հանդակի մոա-

ծի կնիքը: Ագո ժողովներում թե փողոցում, տանը թե աշխատանքի վայրում մարդիկ չէին կարողանում պատահած դժբախտության մասին խոսել առանց արցունքների:

Հիմնարկների, գործարանների, ուսումնական հաստատությունների և բնակելի տների ճակատներին ծածանվում էին դրոշակներ՝ երիզված սգո ժապավեններով, ամրացված էին ի. Վ. Ստալինի նկարները, սև շրջա-


խոսների մոտ՝ լսելու հրապարակում տեղի ունեցող սգո միտինգի հաղորդումը:

Այդ պահին երկանի լենինի հրապարակում, ինչպես ասում են, ասեղ գցելու տեղ չկար, վիթխարի հրապարակը և նրան կից փողոցները լեփ-լեցուն էին մարդկանցով: Տասնյակ հազարավոր մարդիկ՝ բանվորներ, ծառայողներ, մտավորականներ, ուսանողներ, դպրոցականներ ինքնարերաբար, ներ-

թին մի ուժգին մղումով հավաքվել էին այստեղ, կարծեք ներկա լինելու թաղմանը, իրենց վերջին հրաժեշտը տալու այն մարդուն, որի անունը մոտ եղեք տասնյակ տարի ոգեշնչել է բոլորին ամեն տեսակի սըխրագործությունների, վերջին հրաժեշտը տալու հայ ժողովողի մեծագույն բարեկամին, նրա ազատարարին:

Լուր է հրապարակը! Զկա ոչ մի շարժում, ոչ մի ձայն, ոչ մի աղմուկ: Ռազմիոյով լավում

ներ կ. Պ. Բերիայի և Վ. Մ. Մոլոտովի ճաները, որոնք համակված էին մեծ վճռականությամբ և վստահությամբ՝ անսասան շարունակել իրենց անմահ ուսուցչի և առաջնորդի սրբազն գործը, ներկա եղողներն ընդունեցին խորին գոհումակությամբ: Մեծ Ստալինի մերձավորագույն դինակիցների խոսքերը հնչում էին որպես սփոփանք ժողովողի համար, որպես սպեղանի նրա վշտար սրտին, խոսքեր, որոնք գոտեազնդում և



ում է Առաջնորդի քաղման առքիվ Կարմիր հրապարակից տրված ոադիսնաղորդումը:

Է միայն սգո մեղեդին Մոսկվայի Կարմիր հրապարակից:

Աշա լոեց նաև մեղեդին: Լսվում է Սովետական Միության Մինիստրների Սովետի նախագահ Գ. Մ. Մալենկովի ճառը: Նա հրաժեշտի խոսք է ասում մեծ Ստալինի դադաղի մոտ:

Սովետական կառավարության նոր նախագահի, ինչպես նաև նրա առաջին տեղակալ-

հավատ էին ներշնչում առ այն, որ Լենինի ու Ստալինի գրոշը գտնվում է վստահելի ձեռքերում:

Ցերեկվա ուղիղ ժամը 1-ն է տեղական ժամանակով: Մադիոն ազդարարում է, որ Սովետական կառավարության և պարտիայի ղեկավարները ի. Վ. Ստալինի դագաղը բարձրացրած տանում են դեպի դամբարան:

Հրապարակում գտնվող մարդիկ բոլորն

անխտիր հանում են գլխարկները և մնում քարացած, գլխիկոր: Անվերջ հնչում է սգո մեղեղին... Շատերի կրծքից պոռթկում է զուսպ հեկեկանքը...

Այդ պահին Քանաքեռի սարալանջից որոտում է հրանոթալին համազարկը: Որոտին խառնվում են գործարանների և շոգեքարշների աղեկտուր, բեկրեկուն սուլոցները: Քաղաքում հինգ լուսպով դադարում է ամեն երթևեկություն:

Ոչ պակաս հուզիչ էր տեսարանն այդ օրը Քանաքեռի սարալանջի նոր, ընդարձակ զրոսայգում, որ գանվում է Ի. Վ. Ստալինի հոյակապ մոնումենտ-քանդակը:

Օրվա երկրորդ կեսին այստեղ էին եկել տասնյակ հազարավոր երևանցիներ: Մարդիկ անվերջ շարանով մոտենում էին մոնումենտի պատվանդանին, մի պահ կանգնում լուր, գլխիկոր, նայում առաջնորդի բրոնզյա վիթխարի քանդակին ու հեռանում արցունքը աշբերին, վիշտը սրտերում:

Շատերը պատվանդանին դնում էին թարմ ծաղիկների փոմքեր և պսակներ: Ահա մոտենում են մի խոմք դպրոցականներ: Նրանք բերում են թարմ ծաղիկներից իրենց ձեռքով հյուսած մի գեղեցիկ ծաղկեպսակ, որը

խնամքով տանում և դնում են պատվանդանին:

Դպրոցականներին հաջորդում է զինվորական վաշտը: Դրանք հայկական զորամասերից մեկի մարտիկներն են իրենց հրամանատարի գլխավորությամբ: Զինվորական հատու քայլերով նրանք մոտենում են մոնումենտին և կանգ առնում: Լսվում է հրամանը: Բոլորը պատվի են առնում: Շարքից դուրս են գալիս մի խոմք մարտիկներ և իրենց հետ բերած հսկայական ծաղկեպսակը տանում և դնում են պատվանդանին ու մնում մի պահ քարացած, գլխիկոր: Լսվում է դարձյալ հրամանը: Զինվորները հատու քայլերով ետ են դառնում, գրավում իրենց տեղերը և վաշտը նույն կարգով հեռանում է:

Մեծ առաջնորդի մոնումենտ-քանդակի պատվանդանին պսակներ են դնում երեսնի գործարանների, հիմնարկների, ուսումնական հաստատությունների, դպրոցների տասնյակ կողեկտիվներ:

Մինչև ուշ երեկո մոնումենտի շրջակա հրապարակը լի էր մարդկանցով:

Հայոց մայրաքաղաքը իր խորին հարգանքն էր մատուցում և վերջին հրաժեշտն էր տալիս իմաստուն առաջնորդին և ուսուցչին, մեծ Ստալինին...

